

ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ՍԿՉԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ազատ Բողոքյան

ՀՀ ԳԱԱ ԱԻ

DOI: 10.54503/978-5-8080-1550-0-41

Պատկերամարտության դարաշրջանի միջնադարյան սկզբնադրյունները բազմազան են: Դրանք վերաբերում են միջնադարյան պատմագրությանը, արվեստաբանությանը, աստվածաբանությանը, արվեստին և դրամագիտությանը: Հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրության տեսանկյունից պատկերամարտության դարաշրջանի բյուզանդական սկզբնադրյուններին բավական ընդարձակորեն անդրադարձել են Լեսլի Բրուբակերը և Ջոն Հալդոնը¹: Նրանց գրքի առաջին մասը վերաբերում է նյութական մշակույթին (ճարտարապետություն², ձեռագրեր, սրբապատկերներ, արձաններ, մանվածք³, մետաղյա իրեր, կնիք և դրամներ⁴, արձանագրություններ, հնագիտություն, պատմական աշխարհագրություն), երկրորդը՝ գրավոր սկզբնադրյուններին (պատմագրություն և ժամանակագրություններ, սրբախոսություն և հարակից մատենագրություն, եկեղեցական ժողովների արձանագրություններ, աստվածաբանական և հականառական երկեր. թղթեր, ատենախոսություններ, քարոզներ, շարականներ, նամակներ, իրավագիտական գրականություն, հիշատակագրություններ, պաշտոնական և անպաշտոն վավերագրեր, տեղեկատվական նյութեր, ոչ ծիսական բանաստեղծություն և տաղաչափական երկեր): Հեղինակները ընդգրկել են գրեթե բոլոր տեսակի սկզբնադրյուններ և դրանց շուրջ գրված ժամանակակից աշխատությունների տեսակետներ, դրանով իսկ հեշտացնելով այստեղ մեր գործը:

¹ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001:

² Է–Ը դդ. Հայաստանի մոնումենտալ արվեստին և կերպարվեստին անդրադարձել է մեր գրքում Չառա Հակոբյանը:

³ Եվրոպացիներն այն անվանում են տեքստիլ:

⁴ Մերձավոր Արևելքի դրամների քննությանը մեր գրքում անդրադարձել է նաև Արմինե Չոհրաբյանը:

ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ՍԿՉԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ազատ Բողոքյան

ՀՀ ԳԱԱ ԱԻ

DOI: 10.54503/978-5-8080-1550-0-41

Պատկերամարտության դարաշրջանի միջնադարյան սկզբնադրյունները բազմազան են: Դրանք վերաբերում են միջնադարյան պատմագրությանը, արվեստաբանությանը, աստվածաբանությանը, արվեստին և դրամագիտությանը: Հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրության տեսանկյունից պատկերամարտության դարաշրջանի բյուզանդական սկզբնադրյուններին բավական ընդարձակորեն անդրադարձել են Լեսլի Բրուքակերը և Ջոն Հալդոնը¹: Նրանց գրքի առաջին մասը վերաբերում է նյութական մշակույթին (ճարտարապետություն², ձեռագրեր, սրբապատկերներ, արձաններ, մանվածք³, մետաղյա իրեր, կնիք և դրամներ⁴, արձանագրություններ, հնագիտություն, պատմական աշխարհագրություն), երկրորդը՝ գրավոր սկզբնադրյուններին (պատմագրություն և ժամանակագրություններ, սրբախոսություն և հարակից մատենագրություն, եկեղեցական ժողովների արձանագրություններ, աստվածաբանական և հականառական երկեր. թղթեր, ատենախոսություններ, քարոզներ, շարականներ, նամակներ, իրավագիտական գրականություն, հիշատակագրություններ, պաշտոնական և անպաշտոն վավերագրեր, տեղեկատվական նյութեր, ոչ ծիսական բանաստեղծություն և տաղաչափական երկեր): Հեղինակները ընդգրկել են գրեթե բոլոր տեսակի սկզբնադրյուններ և դրանց շուրջ գրված ժամանակակից աշխատությունների տեսակետներ, դրանով իսկ հեշտացնելով այստեղ մեր գործը:

¹ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001:

² Է–Ը դդ. Հայաստանի մոնումենտալ արվեստին և կերպարվեստին անդրադարձել է մեր գրքում Չառա Հակոբյանը:

³ Եվրոպացիներն այն անվանում են տեքստիլ:

⁴ Մերձավոր Արևելքի դրամների քննությանը մեր գրքում անդրադարձել է նաև Արմինե Չոհրաբյանը:

Կփորձենք ուշադրություն հրավիրել այն բնագրերի և նյութերի վրա, որոնք վրիպել են հեղինակների տեսադաշտից և իրենց ծագմամբ պատկանում են հիմնականում հայագիտության ոլորտին:

Պատմագրություն և ժամանակագրություններ. Պատկերամարտությունը քաղաքական գոյապայքարի ձև (դոկտրինա) դարձավ Բյուզանդական կայսրությունում Իսավրական կայսր Լևոն Գ-ի (717–741) իշխանության տարիներից, երբ Կ. Պոլսի պատրիարքական աթոռից հեռացավ Գերմանոս Ա պատրիարքը (715–730): Արաքական արշավանքներն հասել էին իրենց հաղթական վերելքին, ժամանակ առ ժամանակ Կ. Պոլիսը շրջապատվում էր նրանց նավատորմի և ցամաքային բանակների կողմից, որոնք ավարառում էին ողջ Փոքր Ասիան և Ադրիատիկ ծովի կղզիները: Երբեմն Բալկաններից կամ Կովկասից ներխուժում էին խազարները կամ բուլկարները: Եթե համեմատենք նախորդ դարաշրջանի հետ, ապա Ը դարը բյուզանդագետներից շատերն անվանում են «մութ» դարաշրջան, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ այդ հարյուրամյակի մասին մեզ են հասել հարաբերականորեն ավելի քիչ բյուզանդական մատենագրական հուշարձաններ: Այնուամենայնիվ, Թ–ԺԱ դդ. բյուզանդական մատենագրական հուշարձանները ամենահարուստն են տվյալ ժամանակաշրջանի պատմությանը վերաբերող իրենց տեղեկություններով⁵: Բյուզանդագետները նաև շեշտում են, որ պահպանված բյուզանդական պատմագրական սկզբնաղբյուրները հիմնականում ծագում են պատկերապաշտների շրջապատից, որոնցից մեզ հասած հնագույն հեղինակներն են Թեոփանես Խոստովանողը և Նիկեփոր պատրիարքը, որոնք գրել են մինչև Թ դարի 30-ական թթ., օգտվելով շատ դեպքերում մեզ չհասած ականատեսների երկերից և հիշողություններից⁶: Հիշատակված բյուզանդագետները պրնդում են, որ Թեոփանես Խոստովանողը, Նիկեփորը և նրանցից հետո գրած պատմիչները (Լոգոթետոսի Ժամանակագրությունը ևն.) գտնվում են իրենց իսկ ապրած դարաշրջանի խոր ազդեցության ներքո և այլ աչքով են դիտում Ը–Թ դդ. տեղի ունեցած իրադարձու-

⁵ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 165–166:

⁶ Տե՛ս նույն տեղում, p. 166:

Կփորձենք ուշադրություն հրավիրել այն բնագրերի և նյութերի վրա, որոնք վրիպել են հեղինակների տեսադաշտից և իրենց ծագմամբ պատկանում են հիմնականում հայագիտության ոլորտին:

Պատմագրություն և ժամանակագրություններ. Պատկերամարտությունը քաղաքական գոյապայքարի ձև (դոկտրինա) դարձավ Բյուզանդական կայսրությունում Իսավրական կայսր Լևոն Գ-ի (717–741) իշխանության տարիներից, երբ Կ. Պոլսի պատրիարքական աթոռից հեռացավ Գերմանոս Ա պատրիարքը (715–730): Արաքական արշավանքներն հասել էին իրենց հաղթական վերելքին, ժամանակ առ ժամանակ Կ. Պոլիսը շրջապատվում էր նրանց նավատորմի և ցամաքային բանակների կողմից, որոնք ավարառում էին ողջ Փոքր Ասիան և Ադրիատիկ ծովի կղզիները: Երբեմն Բալկաններից կամ Կովկասից ներխուժում էին խազարները կամ բուլկարները: Եթե համեմատենք նախորդ դարաշրջանի հետ, ապա Ը դարը բյուզանդագետներից շատերն անվանում են «մութ» դարաշրջան, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ այդ հարյուրամյակի մասին մեզ են հասել հարաբերականորեն ավելի քիչ բյուզանդական մատենագրական հուշարձաններ: Այնուամենայնիվ, Թ–ԺԱ դդ. բյուզանդական մատենագրական հուշարձանները ամենահարուստն են տվյալ ժամանակաշրջանի պատմությանը վերաբերող իրենց տեղեկություններով⁵: Բյուզանդագետները նաև շեշտում են, որ պահպանված բյուզանդական պատմագրական սկզբնաղբյուրները հիմնականում ծագում են պատկերապաշտների շրջապատից, որոնցից մեզ հասած հնագույն հեղինակներն են Թեոփանես Խոստովանողը և Նիկեփոր պատրիարքը, որոնք գրել են մինչև Թ դարի 30-ական թթ., օգտվելով շատ դեպքերում մեզ չհասած ականատեսների երկերից և հիշողություններից⁶: Հիշատակված բյուզանդագետները պրնդում են, որ Թեոփանես Խոստովանողը, Նիկեփորը և նրանցից հետո գրած պատմիչները (Լոգոթետոսի Ժամանակագրությունը ևն.) գտնվում են իրենց իսկ ապրած դարաշրջանի խոր ազդեցության ներքո և այլ աչքով են դիտում Ը–Թ դդ. տեղի ունեցած իրադարձու-

⁵ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 165–166:

⁶ Տե՛ս նույն տեղում, p. 166:

թյունները: Խոսքը վերաբերում է նաև օգտագործված տոմարական համակարգերի վերծանությանը, բնագրական կրկնություններին և այլ խնդիրների⁷:

Դարաշրջանի բյուզանդական բնագրերի մեջ հատուկ տեղ ունի Թեոփանես Խոստովանողի Ժամանակագրությունը⁸: Այն գրված է 810–814 թթ., սակայն հեղինակն ականաատեսն է Ը դարի վերջի մի քանի տասնամյակների իրադարձությունների: Թեոփանեսն ըստ Բրուքսների և Հալդոնի, թեպետ օգտվում է Գևորգ Սինկելոսի հավաքած նյութից և իրադարձությունների շարադրման կառուցվածքից, ինքնուրույն հեղինակ է, և այնքան էլ կանխակարծ չէ ինչպես Նիկիփոր պատրիարքը⁹: Թեոփանեսն օգտվում է Լևոն Գ և Կոստանդին Ե կայսեր դարաշրջանի մեզ անհայտ որոշ աղբյուրներից, իր ասածները մի շարք դեպքերում հիմնավորում է ասորական սկզբնաղբյուրներով. պատմիչը դրական երանգներով է ներկայացնում Արտավազդ բռնապետին, որոշ դրական մոտեցումներ տարածելով նաև առաջին երկու պատկերամարտ կայսրերի գործունեության վրա¹⁰: Այնուամենայնիվ այս երկը հիշատակված երկու բյուզանդագետները որակում են իբրև կանխակարծ (տենդենցիոզ) և շատ բարդ յուրաքանչյուր օգտվողի համար¹¹:

Նիկիփոր պատրիարքի (806–815) Համառոտ պատմության կորիզը գրվել է, երբ նա հավանաբար եղել է կայսերական նոտար-քարտուղար (շուրջ 780-ական թթ.) և մասնակցել է Նիկիայի Բ Տիեզերական ժողովին: Նրա օգտագործած աղբյուրները բավական սակավաթիվ են և մեծամասամբ նույնանում են Թեոփանեսի ձեռքի տակ եղածների հետ. դրանցից է Կոստանդին Ե-ի և Լևոն Դ-ի ժամանակներում գրված և մեզ չհասած, այսպես կոչված «Մեծ ժամանակագրությունը» և այլ երկեր¹²:

⁷ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 167–168.

⁸ Այս բնագրի մեզ հետաքրքրող մասի հայերեն թարգմանությունը տե՛ս **Թեոփանես Խոստովանող** 1983:

⁹ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 168–169:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, p. 169–170:

¹¹ Տե՛ս անդ, p. 170:

¹² Տե՛ս նույն տեղում, p. 171–172:

Գևորգ Վանականի Հակիրճ (συντόμως) Ժամանակագրությունը Ը դարի վերջի և Թ դարի սկզբների կարևորագույն սկզբնաղբյուրներից է, որն հասնում է մինչև 842 թ. և գրվել է Միքայել Գ կայսեր իշխանության տարիներին, այն բնութագրվում է իբրև օրթոդոքս ուղղության վանական ժամանակագրություն, ուր նգովվում են պատկերամարտները, այս երկում դժվարությամբ կարելի է սահմանագատել իրականությունը առասպելից¹³:

Սիմեոն մագիստրոս/լոգոթետոսի Ժամանակագրությունը շարունակվել է ավելի ուշ ապրած հեղինակի կողմից և ընդգրկում է 842–963 թթ. պատմական իրադարձությունները և հիշատակվում է նաև Գևորգ Վանականի Շարունակություն անվանումով: Այն ունի երկու խմբագրություն, որոնք թվագրվում են Ժ դարով, դրանցից երկրորդն է համարվում Սիմեոն Լոգոթետոսի Ժամակագրությունը: Կա նաև մի երրորդ ժողովածու, որն հիմնված է Թեոփանեսի, Գևորգ Վանականի և Սիմեոն Լոգոթետոսի երկերի վրա և գրվել է Բարսեղ Բ-ի կառավարման ժամանակաշրջանում. այն հայտնի է «Կեղծ Սիմեոն» անունով¹⁴: Սիմեոն մագիստրոս/լոգոթետոսը Կոստանդին Է Ծիրանածին կայսեր ժամանակակիցն է, իսկ նրան պատկանող Համաշխարհային Ժամակագրությունը հասել է մինչև 948 թ., սակայն այն մեզ է հասել երեք տարբերակով. 1. ոմն Լևոն Քերականի 1013 թ. կազմած խմբագրությամբ (Փարիզ, հուն. 1711), 2. ԺՉ դ. կազմված մի տարբերակով, որը վերագրվել է Թեոդոսիոս Մելիտինացուն (Մելիսենոս)¹⁵, և 3. ԺՉ դ. գրիչ և գիտնական Անդրեաս Դարմարիոսի կողմից վերագրվել է Բ դարի հեղինակ Հուլիոս Պոլիդեսիսին¹⁶: Մասնագետները կարծում են, որ հիշատակված տարբերակները հիմնված են մի համառոտ Ժամանակագրության վրա, ուր նկարագրված են եղել Հուստինիանոս Բ-ից մինչև 842 թ. հասնող իրադարձությունները, որն այնուհետև լրացվել է մինչև 948 թ. տեղի ունեցած դեպքերի շարադրանքով¹⁷: Երկի սլավոնական միջ-

¹³ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 172–173:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, p. 173–174:

¹⁵ Հմմտ. **Kresten** 1976, S. 207–22:

¹⁶ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 174:

¹⁷ Տե՛ս **Treadgold** 1979, p. 157–197:

նադարյան թարգմանություն-տարբերակը վերագրվել է Լևոն Քերականին¹⁸:

Դարաշրջանի իրադարձություններին անդրադառնում են նաև Թեոփանես Խոստովանողի երկի Ժ–ԺԱ դարի երեք շարունակողները.¹⁹ Թեոփանեսի Շարունակողը²⁰, Հովսեփ Գենեսիոսը և Հովհաննես Սկիլիցեսը²¹: Բազմաթիվ տեղեկություններ կարելի է գտնել նաև Բյուզանդական մի շարք Մանր ժամանակագրություններում²²: Հայագիտության համար հետաքրքիր են Փիլիպիկոս-Վարդանի, Լեվոն Ե-ի, Պավլիկյան շարժման և այլ իրադարձությունների մասին տեղեկությունները:

Բրուքսկերը և Հալդոնը անդրադառնում են նաև այլ լեզուներով գրված և այդ դարաշրջանի պատմությունն արծարծող մատենագրական երկերին: Լատին պատմագրությանը պատկանող երկերից հիշատակվում են 725/6 թ. կազմված Liber historiae Francorum-ը, 741–829 թթ. դեպքերը նկարագրող, սակայն 793 թ. կազմված Annales regni Francorum-ին, մինչև 876 թ. հասնող Annales Fuldenses-ը, մինչև 873 թ. իրադարձությունները ներկայացնող Annales Xantenses-ին, մինչև 867 թ. հասնող Annales Bertiniani-ն, Annales regni Francorum-ը, 887 թ. գրված Gesta Karoli Magni-ն, մինչև 892 թ. ընդգրկող Liber pontificalis-ը և 830–848 թթ. գրված Liber pontificalis ecclesiae Ravennatis-ը, մինչև 744 թ. հասնող Պավել Սարկավազի Historia Langobardorum-ը և այլ բազմաթիվ երկեր, ուր ներկայացված են ֆրանկների, Հռոմի և Ռավենայի էկզարխատի եկեղեցիների, Լանգոբարդիայի փոխհարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ²³:

Բրուքսկերն ու Հալդոնը ներկայացրել են նաև քրիստոնյա Արևելքի (ասորի և արաբ) մարոնի, հակոբիկ, նեստորական և մու-

¹⁸ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 174–176:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, p. 176–178:

²⁰ Այս երկի հայերեն թարգմանությունը տե՛ս **Թեոփանոսի Շարունակող** 1990:

²¹ Այս երկի հայերեն թարգմանությունը տե՛ս **Հովհաննես Սկիլիցես** 1979:

²² Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 178–184:

²³ Տե՛ս նույն տեղում, p. 185–188:

սուլման-արաբական պատմագրությունները²⁴, հայկական մի շարք պատմիչների (Մովսես Խորենացի, Ղևոնդ Երեց ևն.)²⁵: Հաջորդ գլխում մեր երկու բյուզանդագետներն անդրադարձել են սրբախոսական և հարակից ժանրերի բյուզանդական գրականությանը (սինաքսար, տիպիկոններ, մենոլոգիոն) և առանձին վարք-հրաշապատումների (Անդրեաս առաքյալ, Աննա, Անթուզա Մանտինեացի, Անտոն Նոր, Արտեմի, Աթանաս Էգինացի, Աթանաս Պաուլոպետրացի, Բազիլ, Վլաս Ամորիենացի, Կ.Պոլսի արքեպիսկոպոս Կալինիկոս, Կիրիլ և Մեթոդի, Կոնստանդին Վրացի, Կոստանդին Սիննադացի, Կոզմա և Հովհան Դամասկացի, Դանիել Թասի, Դավիթ, Սիմեոն և Գեորգի, Եղիա Նոր, Եվարեստ, Եփեմիա Քաղկեդոնացի, Եվստրատիոս, Սարդեայի եպիսկոպոս Եվթիմիոս, Գեորգ Ամաստրացի, Գեորգ Միտիլենցի, Կ. Պոլսի արքեպիսկոպոս Գերմանոս, Գրիգոր Ալքիտանացի, Գրիգոր Դեկապոլիտանացի, Հիլարիոն Դալմատացի, Հիլարիոն Վրացի, Կ. Պոլսի արք. Իգնատիոս, Հովհան Ասկետ, Հովհան Դամասկացի, Հովհան Գոթ, Հովհան Պսիխայիտայ, Թեսալոնիկեի արք. Հովսեփ, Հովսեփ Հիմնոգրաֆ, Քրիստրալանտոնի վանամայր Իրենե, Իրենե կայսրուհի, Ղուկաս Նոր, Ղուկաս Սյունակյաց, Պալաչետայի վանահայր Մակար, Մարիամ Նոր²⁶, Սաբայիտացի և Ամորոնի սրբեր, Կ. Պոլսի, Երուսաղեմի և Զորայի վկաներ, Կ.Պոլսի Մեթոդիոս պատրիարք, Միքայել հրեշտակապետի վարք, Երուսաղեմի սինկելոս Միքայել, Միքայել Քաղկեդոնացի, Միքայել Սաբայացի, Միքայել Սիննադենացի, Նիկեփոր բժիշկ, Կ.Պոլսի արք. Նիկեփոր, Մերագեսի վանահայր Նիկեփոր, բժիշկների հիգումեն Նիկետաս, պատրիկ և վանական Նիկետաս, Նիկողայոս Ստուդիտես, Նիկողայոս Նոր, Պողոս Գայումա, Պետրոս Անտոնիտացի, Պետրոս Ատրոյեցի, Մարտիրի եպսկ. Պետրոս, Պետրոս Գալաթացի,

²⁴ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 188–197: Հեղինակների ուշադրությունից վրիպել է Միքայել Ատրոս Ժամանակագրության ԺԳ դարի վաղագույն հայերեն թարգմանությունը:

²⁵ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 197–198: Ցավոք հեղինակները չեն անդրադարձել բազմաթիվ կարևորագույն հայ հեղինակների երկերի:

²⁶ Այս վարքը հայերեն թարգմանությամբ և հետաքրքիր առաջաբանով Էջմիածին ամսագրում հրատարակել է Հր. Բարթիկյանը:

Պետրոս պատրիկ, Փիլարետոս, Պլատոն հիգումեն, Պրոկոպիոս Դեկապոլիտանացի, Ս. Ռոման, Սարգիս Նիկեոսիտա, Ստեփանոս Նոր, Ստեփանոս Սուրբոցի²⁷, Ստեփանոս Սաբատացի, պատրիարք Տարասիոս, Թեոկլետոս, Թեոկլետոս Լեսբոսցի, Թեոկտիստա, Թեոդորա, Թեոդորա կայսրուհի, Թեոդորա Թեսալոնիկցի, Թեոդորոս Եդեսացի, Թեոդոր Գրբապտ, Ստուդիոսի պրեպոզիտ Թեոդորոս, Թեոդորոս Ռեկրուտ, Թեոդոսիա Կ. Պոլսեցի, Թեոփանես Խոստովանող, Թեոփանես Գրապտ, Թեոփիլոս կայսր, Թեոփիլակտոս Նիկոմեդիացի և այլոց վարքեր) բնագրերին²⁸:

Բրուբակերը և Հալդոնը առանձին անդրադարձել են նաև Բյուզանդիայում (754, 787, 815, 843 թթ.), Հռոմում և Արևմուտքում տեղի ունեցած եկեղեցական ժողովների վերաբերող վկայություններին և պահպանված բնագրերին²⁹: Ցավոք, հեղինակները չըջանցել են Զրիստոնյա Արևելքի և Հայոց եկեղեցու ձեռագրերում պահպանված ժողովական փաստաթղթերը և կանոնները³⁰:

Բյուզանդական եկեղեցու Աստվածաբանական և Հակաճառական երկերին, նամակ-վավերագրերին, տրակտատներին, քարոզներին, շարակնագրությանը մեր երկու բյուզանդագետներն անդրադառնում են իրենց գրքի 15-րդ գլխում³¹: Նրանք ընդգծում են, որ Բյուզանդական աստվածաբանական գրականությունը հունարեն լեզվով զարգանում էր ոչ միայն կայսրության սահմաններում, այլ նաև նրա սահմաններից դուրս, դրա վառ օրինակն է Հովհան Դամասկացու մատենագրական գործունեությունը³²: Աստվածաբանական և արարողական, շատ անգամ կոմպիլիատիվ գրականությունը կայսրության մեջ գրվում էր կապված երկրում տեղի ունեցող իրադարձությունների (օր. 717 թ. արաբների և 719 թ. բուլկարների կողմից Կ. Պոլսի շրջապատումը ևն.), ծիսական տարվա արարողու-

²⁷ Այս երկի հայերեն տարբերակի մասին տե՛ս **Bozoyan** 2006, p. 87–107:

²⁸ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 199–232:

²⁹ Տե՛ս նույն տեղում, p. 233–242:

³⁰ Նկատի ունեմ Կանոնագիրք Հայոցը, Յայսմաւուրքը, Մաշտոցը, Գիրք թղթոցը ևն.:

³¹ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 243–275:

³² Տե՛ս նույն տեղում, p. 243:

թյունների և սրբերի պաշտամունքի հետ³³: Բրուքակերն ու Հալդոնն անդրադառնում են Գերմանոս պատրիարքի կամ նրան վերագրված պատկերամարտության նախօրյակին գրած մի շարք նամակների, քարոզների, հականառական երկերի³⁴, Հովհան Դամասկացու հականառություններին (ընդդեմ Կոստանդին Ե Կոպրոնիմոսի և Գեորգ Կիպրացու) և դավանաբանական երկերին³⁵, Լևոն Նեապոլսեցուն վերագրված հակահրեական տրակտատին³⁶, Անաստաս Սինայեցու հականառությանը³⁷, Կոստանդին Ե-ից մեզ չհասած երկերին³⁸, Թեոդոր արքու Կուրայի հականառական երկերին³⁹, 787 թ. ժողովն հրավիրած Տարասիոս և նրան հաջորդած Նիկեփոր պատրիարքի երկերին⁴⁰, վանական Թեոդորոս Ստուդիտեսի նամակներին, հականառություններին, քարոզներին⁴¹, պատրիարք Մեթոդիոսի 843 թ. ուղղափառությունը վերականգնելու մատենագրական ջանքերին⁴², Փոտ պատրիարքի հսկայածավալ մատենագրական գործունեությանը⁴³, և այլ երկերի⁴⁴:

³³ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 244/6:

³⁴ Տե՛ս նույն տեղում, p. 246–8: Հեղինակների ուշադրությունից վրիպել է Գերմանոս Ա պատրիարքի հայերենով պահպանված, Ստեփանոս Սյունեցու միջնորդությամբ Հայոց կաթողիկոսին հասցեագրված նամակը, տե՛ս **Dorfmann-Lazarev** 2013, p. 355–381:

³⁵ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 248–252: Հեղինակները չեն անդրադարձել Հովհան Դամասկացու երկերի միջնադարյան թարգմանություններին՝ հայերեն, ասորորեն, վրացերեն, արաբերեն, ղպտերեն, պավորերեն և այլ լեզուներով:

³⁶ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 252–253:

³⁷ Տե՛ս նույն տեղում, p. 254:

³⁸ Տե՛ս անդ 2001, p. 254–5:

³⁹ Տե՛ս անդ, p. 255: Հեղինակները չեն ընդգրկել Թեոդոր Արքու Կուրային վերաբերող հայկական նյութը, տե՛ս **Ակիմեան** 1922:

⁴⁰ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 256–257:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, p. 257–258:

⁴² Տե՛ս անդ, p. 258:

⁴³ Տե՛ս անդ, p. 259–260: Ցավոք, հեղինակները չեն անդրադարձել Փոտի հայոց կաթողիկոսին ուղղված նամակներին: Այդ մասին տե՛ս **Dorfmann-Lazarev** 2004:

⁴⁴ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 260–261:

Բրուքսերը և Հալդոնը ելնելով, Երուսաղեմի Տիրոջ Ս. Գերեզմանի Դամասկացի վանական, ապա՝ Կրետեի մետրոպոլիտ Անդրեի երկերից, ենթադրում են, որ սերտ կապ գոյություն ունի ճառերի և բյուզանդական շարականագրության միջև: Հետաքրքիր է որ, Անդրեն Փիլիպիկոս կայսեր իշխանության տարիներին ընդունել է միականություն, իսկ 713 թ. վերադարձել է օրթոդոքս եկեղեցու գիրկը⁴⁵: Շարականագրության բնագավառում բյուզանդագետ հեղինակներն անդրադառնում են Հովսեփ Թեսալոնիկեցու, Թեոդորոս Սաուդիտեսի, Միքայել Սինկելլոսի, Թեոփան Գրապտոսի, Կղեմես և Հովսեփ Ժամանակագիրների և այլոց երկերին⁴⁶: Բյուզանդագետները ներկայացնում են նաև դարաշրջանի ծնունդ մի շարք քարոզներ և ճառեր⁴⁷, որոնց հեղինակային պատկանելիությունը վերջնականապես ճշտված չէ. դրանց մեջ է նաև 862 թ. Շիրակավանի ժողովի մասնակից Հովհաննես Նիկեացուն վերագրված երկերը⁴⁸: Հեղինակների կողմից նաև ներկայացվում են Ե–Ժ դարերից հայերենով հասած որոշ սկզբնաղբյուրներ (Վրթանես Քերթոդ, Հովհաննես Մայրավանեցի, Մովսես Դասխուրանցի)⁴⁹, ինչպես նաև հակահերետական և հակահերձվածողական մի շարք երկեր, որոնք մասսայական են դառնում Է դարից (Կեղծ Աթանաս = Ստեփանոս Բոստրացի ?), Աթանաս Սինայեցի, Հովհան Դամասկացի, Տիմոթեոս երեց, Պետրոս Սիկիլիացի⁵⁰, Փոտ Պատրիարք)⁵¹: Պակաս ուշագրավ չեն հեղինակների բերած Հայտնութենաբանական երկերը (Կեղծ Մեթոդիոս,

⁴⁵ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 261–262:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, p. 262–263:

⁴⁷ Տե՛ս անդ, p. 260–267:

⁴⁸ Տե՛ս անդ, p. 264: Այդ գործչի մասին տե՛ս նաև **Dorfmann-Lazarev** 2004:

⁴⁹ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 267–268: Հիշատակված հայ հեղինակների երկերի մի շարք երկերի քննարկումը տե՛ս ներկա գրքի Գաբրիել Նահապետյանի և Չաքարիա ծ.վ. Բաղումյանի հատվածներում:

⁵⁰ Այս հեղինակի մասին և նրա պավլիկյանների վերաբերող երկի ռուսերեն թարգմանությունը տե՛ս **Бартикан** 1961:

⁵¹ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 268–272

Լևոն Կ. Պոլսեցի, մի շարք պատմագրական և վարքագրական երկեր)⁵²:

Նամակներ գլխում (ԺԳ) հեղինակներն անդրադարձել են դարաշրջանի բյուզանդական էպիստոլյար ժառանգությանը (Փոտ պատրիարքի ժողովածու, Միքայել Գ-ի նամակներ), մատենագիտական տեղեկանքներով բերում է այդ ժանրով գրող բոլոր հեղինակների հրատարակությունները (Գերմանոս Ա պատրիարք, Գրիգոր Բ պապ, Թեոդորոս Ստուդիտես, Նիկեփոր պատրիարք, Իգնատիոս Նիկիացի, Միքայել Բ և Թեոփիլոս կայսեր, Մեթոդիոս պատրիարք, Արևելքի երեք պատրիարքներ առ Թեոփիլոս կայսր, Փոտ պատրիարք, Լևոն Գ, Կոստանդին Ե, Կոստանդին Չ, Իրենե կայսրուհի, Նիկեփոր Ա, Միքայել Ա, Լևոն Ե, Միքայել Բ, Թեոփիլոս կայսր), ընդգծելով արևմուտքի եկեղեցաքաղաքական էլիտայի հետ և մուսուլմանական արևելքի հետ փոխանակված վավերագրերի նշանակությունը⁵³: Դրանով հեղինակներն իսկ շրջանցում են Քրիստոնյա Արևելքի և Հայոց եկեղեցիների հետ Բյուզանդիայի փոխհարաբերությունների կարևորությունը հիշյալ խնդիրների քննարկման գործում⁵⁴:

Իրավաբանական բնագրեր և գրականություն գլխում (17) հեղինակներն ընդգծում են Իսավրական կայսրերի 741 թ. ստեղծած Էկլոգայի, Էյրենե կայսրուհու հրովարտականների, Էյսագոգե, Էպանագոգ, Պրոխիրոն և Բասիլիկ ժողովածոների, Լևոն Չ-ի նովելների, Հողագործական, Ծովային, Չինվորական և Մովսիսական իրավուն-

⁵² Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 272–275: Հեղինակները դուրս են թողել Քրիստոնյա Արևելքի և Հայաստանի նմանատիպ բնագրերը, որոնց մասին իր դասական աշխատության մեջ անդրադարձել է Աշոտ Հովհաննիսյանը (տե՛ս **Հովհաննիսյան** 1957, տե՛ս նաև **Pogossian** 2010):

⁵³ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 276–285: Օրինակ՝ նման ժողովածուներից է հայերենով պահպանված այլևայլ հեղինակների դավանաբանական նամականների հավաքածուն (տե՛ս **Գիրք թղթոց** 1901):

⁵⁴ Չեն ներկայացված Հայոց մատենագրության մեջ պահպանված էպիստոլյար ժանրի երկերը: Ժանրի զարգացման ընդհանուր պատկերը տե՛ս **Բոգոյան** 1995, էջ 5–19:

քի ժողովածուների կարևորությունը⁵⁵ պատկերամարտության դարաշրջանի իրավունքի հուշարձանների ուսումնասիրության համար⁵⁶:

Հիշատակագրություններ, պաշտոնական և ոչ պաշտոնական վավերագրեր, տեղեկատվական սկզբնաղբյուրներ գլխում (18) հեղինակներն անդրադարձել են պահպանված և վերականգնելի պետական ծագում ունեցող փաստաթղթերին. Ուսպենսկու Տակտիկոնին, Փիլոթեոսի Կլետորոլոգիոնին, Կոստանդի Է Ծիրանածնի Արարողությունների գրքին⁵⁷, Չինվորական տրակտատներին (Լևոն Զ-ի և այլոց), Նիկեփոր Բ-ի ժամանակներին վերագրվող *De Velitatione Bellica*, մի շարք վիմագիր արձանագրությունների, *Notitiae Episcopatus* ցանկերին, Ուղղեգրական և աշխարհագրական մատենագրությանը. Կոստանդին Է-ի Արարողությունների գրքի Թեմերին վերաբերող հատվածին, *Parastaseis syntomoi chronikai* հիշատակագրություններին, արաբ և պարսիկ մահմեդական աշխարհագրագետների աշխատություններին (իբն Խուռադազբի, Կուդամա, իբն ալ-Փակիհ, արու Յուսուֆ Յակուբ), բառարանագրական և մատենագիտական մատենագրությանը (Փոտի Գրադարան և բառարան, և այլ հուշարձանների)⁵⁸:

⁵⁵ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 786–293: Ցավոք հեղինակները չեն անդրադարձել այն հարցին, որ հիշատակված իրավական երկերից շատերը թարգմանվել են Զրիստոնյա Արևելքի մի շարք լեզուներով և ունեն հետաքրքիր խմբագրություններ: Դրանց թվում է նաև քաղկեդոնական հայերի կողմից թարգմանված Նոմոկանոնը, տե՛ս Ս. Մելքոնյանի հատվածն այս գրքում և իմ հոդվածը **Bozoyan** 2017, p. 79–118: Այդ եկերի հայերեն թարգմանություններին են վերաբերում հետևյալ աշխատանքները. տե՛ս **Բոզոյան** 2017, էջ 86–95, **Բոզոյան** 2023, էջ 265–320, **Բոզոյան** 2023ա, էջ 85–119, **Bozoyan** 2024a, **Bozoyan** 2024b

⁵⁶ Հիշատակված ժողովածուներից, Ներսես Լամբրոնացու թարգմանությանը, հայերեն լեզվով պահպանվել են Էկլոգան և նրա հավելվածներ՝ Չինուորաց օրենսգիրքը, Մովսիսական կանոնները և Ազգակցության մասին տրակտատը, բյուզանդական Նոմոկանոնը ևն. տե՛ս **Բոզոյան** 2020, **Bozoyan** 2024:

⁵⁷ Այս բնագրի հայերեն թարգմանությունը տե՛ս **Կոստանդին Ծիրանածին** 1970:

⁵⁸ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 294–304:

Ոչ Ծիսա-արարողական գրականություն և տաղաչափ մատենագրություն գլխում (19) հեղինակներն անդրադառնում են Անանուն *Palatine Anthology*-ն, Թեոդորոս Ստուդիտեսի բանաստեղծություններին, վերջինիս հակառակորդներ Մերգիոս և Ստեփանոս Գրապտոսների էպիգրամներին, Թեոփանես և Թեոդորոս Գրապտոսների քառյակներին, բանաստեղծուհի Կասիայի ոտանավորներին⁵⁹, պատրիարքներ Մեթոդիոսի և Իգնատիոսի տաղաչափական երկերին, Թեոդորոս Քերականի Կ. Պոլսի 717/8 թ. պաշարմանը նվիրված պոեմին, Անանուն հեղինակի Բարսեղ Ա-ի Ներքողյանին, Իգնատիոս Սարկավագի Թովմա Սլավոնի ապստամբության պարտությանը նվիրված պոեմին, հայ-արաբական պատերազմների և փոխհարաբերությունների մասին պատմող էմիր Սեյֆ ադ-Դաուլայի, Մուրթանաբիի և Իբն Թայֆուրի տաղաչափական ժառանգությանը⁶⁰: Պետք է նշել, որ մեր երկու բյուզանդագետները չեն անդրադարձել Քրիստոնյա Արևելքի ժողովուրդների բազմաժանր պոեզիային:

Մեր գրքի մի շարք գլուխներում ընթերցողը կարող է ծանոթանալ հիմնականում հայկական սկզբնաղբյուրների հետ, որոնք կարող են նոր մանրամասներով հարստացնել դարաշրջանի պատմության ընկալումը:

⁵⁹ Կասիայի մասին տե՛ս **Ադոնց** 2012, էջ 43–74:

⁶⁰ Տե՛ս **Brubaker&Haldon** 2001, p. 305–307: